Զաւետարանն գրեալ է Զըմշկածակցի Գէորգ Եպիսկոպոս վանահայր Ղուլէ վանաց, ուր ասէ՝ միաբանք վանաց յերկիւղէ Լէնկ Թիմուրա փախուցեալ թագեան 'ի ծով դղեակ 'ի Վանս Խարտեշարու եւ 'ի կարմիր վանս Ս. Կարապետի, և յետոյ վերստին դարձան անդ. ապա գրէ զագարակս և զհողս վանաց, և զայլ դէպս ժամանակին որք երկար լինին գրել ասա։ Կնիք 'ի վերայ Ս. Միւռոնին, Ներսէս կաթուղիկոս (ՌԺԵ) (1166), Հեթում (ՌՀԵ) (1226), Միքայէլ Եպիսկոպոս, և Գէորգն անընթեռնլի։ Ի վերայ մասանց Ս. Կիրակոսի, Կիրակոս Եպիսկոպոս Արաղկերու։ Վկայականն, Ս. Կիրակոսի ճակատն է։ Թումայ առաքելոյ, Կնիք Միքայէլ Եպիսկոպոսի (ՁԴ) (1255)։ Վկայական՝ Թովմայի փոքր աջ մասն է։ Կնիքն 'ի վերայ մասանց Ս. Թէոդորոսի անծանօթ. Վկայական, Ս. Թորոսի մասունքն է, չէ յայտ թէ որ տեղւոյ։ Կնիք Ս. Կարապետի մասանց, ողորմութեամբն Աստուծոյ Արքայ Հեթում (ՌՀԵ) (1226), եւ միւսն Միքայէլ Եպիսկոպոսի, վկայականն, ողորմութեամբն Աստուծոյ որք ապագային վայելէք զթագաւորութիւնս Հայոց 'ի տանն Կիլիկիոյ, զգանձն զոր պարգեւեաց Աստուած անարժանիս, յիշեսջիք զհայրն իմ Կոստանդին և զեղբայրն իմ զՊարոն Սմբատն և զսիրելի որդիս Լեւոնն և զԹորոսն և զՌուբենն, և զկողակիցս Զապել թագուհին, որ տառապանօք հոգայ զաղքատս և զկրօնաւորս, և ես Արքայի գանձուց պարգեւեցի Ս. Մասն գագաթան Կարապետին Քրիստոսի։ Եւ ետու պարգեւ մխիթարութեան ընդ կողակցոյս և դեռաբոյս Պարոն Մելքոնին Աստուած վայելում տացէ ամէն (ՁԲ) (1253)։ Եւ այլ բեկորք ոսկերաց, և Ս. Գէորգայ բոլոր մասունքն, և 13 սպիտակ մոմ հանդերձ խնկօք և բամբակօք։ Եւ զմեծ վկայականն կնքեալ են, Կիրակոս և Միքայէլ Եպիսկոպոսունք, և Գէորգ քոռ Եպիսկոպոս, յորում գրեալ է. Արդ ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ դերեզմանս Ս. Գէորգայ ձեռամբ ծառայ ծառայիցն Աստուծոյ Միքայէլ Արք Եպիսկոպոսի, որ շնորհեաց անարժանիս բարեպաշտ Պարոն Մելքոն իշխանն, որ է 'ի գանձուց արքային Լեւոնի, եւ Հեթմոյ առեալ է պարգեւ 'ի ձեռաց Ցունաց, որ ես տեսի կնքով զմուրհակն եւ վկայեմ, և հարիւր դահեկան պարգեւեաց ինձ որ նորոգեցի